ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. մարտի 26-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Բակալավրի կրթական ծրագրերի փոփոխությունների հաստատում
2. Մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխության հաստատում
3. Ասպիրանտի թեմայի վերաձևակերպման հաստատում
4. Ընթացիկ հարցեր

1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի 2024-2028թթ. ուսումնական պլանների փոփոխության հաստատման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ դեռևս դեկտեմբեր ամսից ֆակուլտետում մեկնարկել են բակալավրի կրթական ծրագրերի փոփոխության նախագծի մշակման աշխատանքները՝ միջազգային հավատարմագրման գործընթացին նախապատրաստման նպատակով: Հավելեց, որ այս գործընթացը ծավալվել է նաև ԵՊՀ այլ ֆակուլտետներում և միջազգային հավատարմագրման համար շատ կարևոր է կրթական ծրագրի բովանդակության ընկալելի լինելը: Ընդգծեց, որ ֆակուլտետում գործող բակալավրի 3 կրթական ծրագրերի ուսպլանների փոփոխության արդյունքները քննարկվել են 4 ամբիոններում և քվեարկվել են՝ արժանանալով հավանության: Ամփոփ ներկայացրեց կատարված փոփոխությունները՝ **1)** ուսպլաններում ներառված 9 կրեդիտանոց և 3 կրեդիտանոց դասընթացների կրեդիտները փոփոխվել են և դարձել՝ 6 կրեդիտ, **2)** բոլոր կրթական ծրագրերում վերանայվել են նեղ մասնագիտական դասընթացները, **3)** բոլոր կրթական

ծրագրերում ներդրվել է «Մասնագիտական համակարգչային ծրագրեր» դասընթացը, **4)** կիսամյակների որոշակի փոփոխություններ են կատարվել նախագիտելիք-գիտելիք տրամաբանական շղթան ապահովելու համար:

Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հավելեց, որ ամբիոններում հնչել են մի շարք առաջարկություններ, որոնք 4 նոր փոոխությունների տեսքով պետք է դրվեն քվեարկության գիտխորհրդի անդամներին ուղարկված բակալավրի կրթական ծրագրերի 2024-2028թթ. ուսումնական պլանների հետ միասին: Այդ փոփոխություններն են.

Կառավարում կրթական ծրագրում՝

1) «Արտադրության մենեջմենթ» դասընթացը տեղափոխել 5-րդ (կամընտրական) կիսամյակից 3-րդ (հիմնական) կիսամյակ, փոխարենը «Մարդկային ռեսուրսների կառավարում» դասընթացը տեղափոխել 3-րդ (հիմնական) կիասամյակից 5-րդ (կամընտրական) կիսամյակ:

2) «Ներքին վերահսկողության համակարգեր» դասընթացը վերանվանել՝ «Որակի կառավարման համակարգ»:

Ֆինանսներ կրթական ծրագրում՝

3) «Բանկային նոր տեխնոլոգիաներ» դասընթացը վերանվանել՝ «Բանկային տեխնոլոգիաներ»:

Բոլոր 3 կրթական ծրագրերում՝

4) «Գործառնությունների հետազոտություն» դասընթացը վերանվանել՝ «Գործույթների հետազոտության մաթեմատիկական մեթոդներ»:

2. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ, Որակի ապահովման հանձնաժողովի նախագահ, դոցենտ Վ.Ալեքսանյանը նշեց, որ սույն թվականի մարտի 25-ին կայացել է ՏԿՖ Որակի ապահովման հանձնաժողովի նիստը, որտեղ քննարկվել են ֆակուլտետում գործող բակալավրի 3 կրթական ծրագրերի՝ «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ», 2024-2028թթ. ուսումնական պլանների փոփոխված տարբերակները և տրվել է դրական եզրակացություն:

3. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը մտահոգություն հայտնեց «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ուսումնական պլանում մաթեմատիկական և համակարգչային բաղադրիչ պարունակող դասընթացների կրեդիտների կրճատման համար՝

ներկայացնելով աշխարհի որոշ բուհերի ուսպլանների ռեֆորմների արդյունքներն այս համատեքստում:

Տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը նշեց, որ գնահատելի է այս նախաձեռնությունը՝ հանձինս դեկանի, մասնակցել է ձևավորված աշխատանքային խմբերի և՛ աշխատանքային, և՛ ընդհանուր քննարկումներին, ինչպես նաև ամբիոնի նիստում՝ կողմ քվեարկելով: Ներկայացրեց իր տեսանկյունից ուսումնական պլանների փոփոխված տարբերակների մտահոգիչ կողմերը՝ մաթեմատիկական և համակարգչային ուղղվածությամբ դասընթացների նվազումը, մի քանի դասընթացների ոչ նախընտրելի հաջորդականությունը, ուսպլաններում կատարվող փոփոխությունների հաստատման սեղմ ժամկետները:

Տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը նշեց, որ մաթեմատիկական առարկաների ներառման մասով պետք է կարևորել հետևյալ հանգամանքը՝ ֆակուլտետում գործող բակալավրի 3 ծրագրերի ուսպլանները չծանրաբեռնել մաթեմատիկայով, հարկավոր է ուսանողներին փոխանցել մաթեմատիկայի այնպիսի գիտելիքներ, որոնք պետք են ամենօրյա ռեժիմով կիրառման համար:

Տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը նշեց, որ ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի 2024-2028թթ. ուսումնական պլանները գործողի համեմատ էապես բարելավվել են՝ շեշտադրելով հատկապես պարիտետի պահպանումը ուսպլաններում ներառված դասընթացների մասով և բոլոր ամբիոնների միջև:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը մատնանշեց, որ պետք է առաջնային համարել ոչ թե դասընթացի ժամաքանակը, այլ բովանդակությունը:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ «Ֆինանսներ» մասնագիտությամբ ուսումնական պլանի փոփոխության արդյունքում ծրագիրը ավելի շատ բարելավվել է՝ ներառվել են նոր դասընթացներ, մշակվել՝ դրանց արդյունավետ կազմակերպման գործիքները:

Տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը և տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը նշեցին, որ համակարծիք են գործընկերների այն կարծիքին, ըստ որի ուսումնական պլանների առաջարկվող փոփոխությունները միանշանակ կարելի է գնահատել դրական և առաջարկեցին հաստատել:

Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ելույթով ամփոփեց քննարկման արդյունքները՝ մատնանշելով, որ ուժեղ մաթեմատիկական ապարատը միշտ եղել է ֆակուլտետի զարգացման գրավականը, ուսպլանների փոփոխությունները իրականացվել են ըստ առաջնահերթությունների՝ նախ ամրագրվել են մաթեմատիկական առարկաները, «Միկրոտնտեսագիտություն» (1-ին և 2-րդ մակարդակներ), «Մակրոտնտեսագիտություն» (1-ին և 2-րդ մակարդակներ), «Ֆինանսներ» և «Մենեջմենթ» դասընթացները: Ընդգծեց, որ ուսանողը պետք է շաբաթական 20 ժամ անցկացնի լսարանում՝ նախկին 29 ժամի փոխարեն, այդ

նպատակով մաթեմատիկական առարկաները բովանդակային մասով վերանայվել, փոփոխվել և վերաձևակերպվել են՝ «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար - 1» և «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար - 2», բոլոր 3 կրթական ծրագրերում ներառվել են «Մասնագիտական ծրագրային փաթեթներ» (հիմնական) և «Ժամանակային շարքերի էկոնոմետրիկա և կանխատեսում» (կամընտրական) դասընթացները: Հավելեց նաև, որ մաթեմատիկայի տեսանկյունից ֆակուլտետում բակալավրի ևս մեկ կրթական ծրագիր («Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն») ունենալու գաղափարը իրագործելու նպատակով կստեղծվի աշխատանքային խումբ կրթական ծրագրի մշակման համար, որը սահմանված կարգով լիցենզավորվելուց հետո կգործի 2025-2026 ուստարվանից: Բակալավրի 3 ծրագրերի ուսումնական պլանների փոփոխված տարբերակներում բացառվել են դասընթացների բովանդակության կրկնությունները, հստակեցվել են վերջնարդյունքները, առարկաների մեծ մասը պետք է վարվեն գործնական պարապմունքներով: Բակալավրի փոփոխված կրթական ծրագրերը գործող ծրագրերից վստահաբար քայլ նահանջ չեն:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել ֆակուլտետի բակալավրի «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի 2024-2028թթ. ուսումնական պլանները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 22.03.24թ. կայացած թիվ 9 նիստի, «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնի 21.03.24թ. թիվ 8 նիստի, «Ֆինանսահաշվային» ամբիոնի 21.03.24թ. թիվ 7 նիստի, «Կառավարման և գործարարության» ամբիոնի 20.03.24թ. թիվ 11 նիստի, ինչպես նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Որակի ապահովման հանձնաժողովի 25.03.24թ. թիվ 2 նիստի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ֆակուլտետի բակալավրի «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի 2024-2028թթ. ուսումնական պլանները:

ՏԿՖ բակալավրի կրթական ծրագրերի փոփոխված և լրամշակված տարբերակների հաստատման որոշումն ընդունվեց՝ քվեարկության 23 կողմ, 2 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ «Տնտեսական

քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխության հաստատման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ այս հարցը քննարկվել է գիտխորհրդի 31.01.2024թ. թիվ 5 նիստին և ընդունվել է որոշում՝ լրամշակել և լավարկել ՏՔԻ մագիստրոսական կրթական ծրագիրը, այդ նպատակով ձևավորել աշխատանքային խումբ: Ընդգծեց, որ աշխատանքային խմբի ինտենսիվ գործունեության շնորհիվ ՏՔԻ մագիստրոսական կրթական ծրագիրը էապես լրամշակվել և լավարկվել է:

2. ՏՔԻ մագիստրոսական կրթական նոր ծրագրի փոփոխված տարբերակի մշակման աշխատանքները համակարգող պրոֆեսոր, տ.գ.դ. Մ.Միքայելյանը շնորհակալություն հայտնեց աշխատանքային խմբի անդամներին՝ համակարգված աշխատելու և սեղմ ժամկետում պահանջվող փոփոխությունները կատարելու համար: Նշեց, որ ՏՔԻ կրթական ծրագրի լրամշակված ուսումնական պլանը հասանելի է եղել գիտխորհրդի բոլոր անդամներին և պատրաստ է պատասխանել մագիստրոսական ծրագրի լրամշակված և լավարկված տարբերակին առնչվող հարցերին:

Հարցեր չհնչեցին:

3. Ելույթ ունեցան տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը: Մատնանշվեց այն, որ ՏՔԻ մագիստրոսական ծրագրի լրամշակված և լավարկված տարբերակը գրեթե բացառել է բոլոր այն մտահոգությունները, որոնք առկա էին նախորդ փոփոխված տարբերակում:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել ՏՔԻ մագիստրոսական կրթական ծրագրի ներկայացված տարբերակը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 28.02.24թ. թիվ 7 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել առկա ուսուցմամբ «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի (1.5 տարի, 90 ECTS) փոփոխված և լրամշակված տարբերակը:

ՏՔԻ մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխված և լրամշակված տարբերակի հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ասպիրանտ Միեր Գագիկի Վարդանյանի ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի առկա ասպիրանտ Մ.Վարդանյանի ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» և «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի» ամբիոնների 14.03.2024թ. թիվ 1 համատեղ նիստում որոշվել է Միեր Գագիկի Վարդանյանի ատենախոսության «Անհավասարակշռության պայմաններում վարվելակերպային մոդելավորման հիմնախնդիրները (ՀՀ տնտեսության օրինակով)» թեման վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Բարդության տնտեսագիտության մոդելավորման հիմնախնդիրը տվյալագիտության գործիքակազմով» (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան):

2. Ասպիրանտ Միեր Վարդանյանը հիմնավորեց ատենախոսության թեմայի վերաձևակերպման անհրաժեշտությունը՝ նշելով, որ «Բարդության տնտեսագիտությունը» ընդգրկուն է և ընդլայնում է «Անհավասարակշռության պայմանները» եզրույթը, նմանապես «Վարվելակերպային մոդելավորումը» կատարվում է տվյալագիտության արդի գործիքակազմով:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տ.Կարապետյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Հարցադրումներն առնչվում էին «Բարդության տնտեսագիտություն» եզրույթի բովանդակությանը, օտար լեզուներից թարգմանության խնդրին, նաև համակարգչային գիտության մեջ «բարդություն» եզրույթի կիրառությանը:

4. Ասպիրանտ Միեր Վարդանյանը հակիրճ պատասխանեց բոլոր հարցադրումներին՝ հղում կատարելով ատենախոսության շրջանակում կատարված հետազոտությունների համար հիմք ծառայած մի շարք հոդվածների վրա:

5. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» և «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի» ամբիոնների 14.03.2024թ. թիվ 1 համատեղ նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված

կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ասպիրանտ Միեր Գագիկի Վարդանյանի ատենախոսության «Անհավասարակշռության պայմաններում վարվելակերպային մոդելավորման հիմնախնդիրները (ՀՀ տնտեսության օրինակով)» թեման վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Բարդության տնտեսագիտության մոդելավորման հիմնախնդիրը տվյալագիտության գործիքակազմով», Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

«Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի առկա ասպիրանտի թեմայի վերաձևակերպման որոշումն ընդունվեց՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*